հափառ Հայրապետը նշեց. «Նմանապիպ կապերը մեր մեջ ամրացնում են հույսը խաղաղ, ապահով ու անվրդով աշխարհի համար»:

Իր հերթին պրն. Թյիրկը երախտագիտություն հայտնեց ընդունելության համար եւ ներկայացրեց այցի իր փպավորությունները, նշելով, որ Սլովենիայի ժողովուրդը տեղյակ է հայ ժողովրդի բազմադարյա պատմությանը եւ քրիստոնեական հարուստ մշակույթին: Անդրադառնալով երկու երկրների հարաբերություններին՝ Սլովենիայի նախագահը նշեց. «Աշխարհագրականորեն հեռու ենք, սակայն շատ ընդհանրություններ ունենք. մեծ ապագա պիտի ունենա մեր համագործակցությունը»:

Սլովենիայի նախագահը խոսեց խաղաղ աշխարհի կառուցման գործում հոգեւոր առաջնորդների կարեւոր դերակատարության մասին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը նշեց Հայ Եկեղեցու՝ այլ կրոնների հետ խաղաղ գոյակցության պատմական փորձառությունը, ինչպես նաեւ ներգրավվածությունը միջկրոնական երկխոսության մեջ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Եկեղեցի-պետություն հարաբերություններին, Եւրոպայում արձանագրվող քրիստոնեական արժեքների ու աշխարհայացքի նահանջի դրսեւորումներին, ընդգծվեց հոգեւոր արժեքների զորացման անհրաժեշտությունը հանուն մարդկության խաղաղ ու բարօր կյանքի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՆՐԵԱԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Հոկտեմբերի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոնրեալի քաղաքապետ Ժերալդ Թրամբլեին՝ Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի ուղեկցությամբ: Նորին Սրբությունը, ողջունելով քաղաքապետի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, իր գնահատանքն ու երախտագիտությունը հայտնեց Կանադայի իշխանություններին, որ անտարբեր չեն եղել հայոց մեծագույն ողբերգության նկատմամբ եւ դեռ 17 տարի առաջ ճանաչել են Հայոց Ցեղասպանությունը:

Իր հերթին Մոնրեալի քաղաքապետ Ժերալդ Թրամբլեն իր ջերմ շնորհակալությունը հայտնեց ընդունելության համար: Ծանոթանալով Մայր Աթոռի թանգարաններում պահվող հայ հոգեւոր մշակույթի գանձերին՝ մեծարգո քաղաքապետը ցանկություն հայտնեց դրանք ցուցադրել նաեւ Մոնրեալի ժողովրդին, որ կհիշեցնեն նրանց այն արժեքների մասին, որոնք մոռացման ենթակա չեն եւ որոնցով պետք է ապրել:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ